Արձանագրություն N 5

ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Տաքսի ծառայության համակարգ»-ի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 ապրիլի 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Աննա Պողոսյանը, անդամներ՝ Արմինե Հանիսյանը, Նոնա Ղալեչյանը, Մարիամ Թադևոսյանը, Աննա Պողոսյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով գնման ընթացակարգի ընթացակարգի հատերի գնահատման մասին.

ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Աննա Պողոսյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը պարզեց, որ ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին: «ԼուիՍոֆտ» ՍՊԸ և «Դունայս» ՍՊԸ /կոնսորցիում/-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ մասնավորապես. համատեղ գործունեության պայմանագրում մրցույթի ծածկագիրը «ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2026/1»-ի փոխարեն նշված է «ՀՀ ՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-2026/01»: Նշված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման: Ինչպես նաև «մասնագիտական փորձառություններ» չափանիշի մասով ներկայացված АНО ДПО Корпор. унив. Сберб._Договор №79422-НОР-25 от 11.12.2025 պայմանագրում Պայմանագրի ամբողջական գումարը նշված է 1359402՝ համակարգի ծրագրավորում և սպասարկում, սակայն ըստ ներկայացված ընդունման-հանձնման փաստաթղթերի վճարվել է ծրագրավորման դիմաց և մեկ ամսվա սպասարկում՝ 1186602: АО Авиакод_Договор № ИТ-226-АВИК-041-23-Р07 от 24.11,2023 պայմանգրի գինը նշված է 6972240, սակայն փաստաթղթերով վճարված գումարը կազմում է 4940517: ПАО НЛМК_Договор № ИТ-217 от 31.05.2023 պայմանգրի գինը նշված է 32400000, սակայն համաձայն վճարման փաստաթղթերի վճարվել է 44038080: Նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում վերոնշյալ պայմանագրերը չեն գնահատվի:

«ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով առկա են որոշակի անհամապատասխանություններ: Մասնավորապես.հրավերով պահանջվել է, որ աշխատակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 5 (հինգ) հոգուց բաղկացած SS ոլորտի ծրագրային ապահովումների նախագծման և մշակման անձնակազմ: Ընկերությունը ներկայացրել է 5 (հինգ) հոգուց բաղկացած անձնակազմի ցանկ, որում ներառված Արման Մարգարյանը ըստ տեղեկանքի աշխատում է 2021թ-ից է, իսկ ըստ ներկայացված ցանկի՝ 2018 թ-ից: Տաթևիկ Հարությունյանն ըստ տեղեկանքի աշխատում է 2012թ-ից է, իսկ ըստ ներկայացված ցանկի՝ 2015 թ-ից: Նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի ոչ գնային պայմաններով չափանիշին չհամապատասխանող, և հայտը ենթակա կլինի մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝

- Համաձայն 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի՝ ընթացակարգը կասեցնել մեկ աշխատանքային օրով, և ԼուիՍոֆտ» ՍՊԸ և «Դունայս» ՍՊԸ /կոնսորցիում/-ին ու «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

-Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2025թ. ապրիլի 23-ին ժամը 10:00-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում (սենյակ 233):

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Աննա Պողոսյան

անդամներ _____ Արմինե Հանիսյան

_____ Նոնա Ղալեչյան

_____ Մարիամ Թադևոսյան

_____ Աննա Պողոսյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան